Կարգապահական գործ թիվ ԿԳ-25084

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԼԻԹ ԼԻՊԱՐԻՏԻ ՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Գրիգոր Գրիգորյանի և փաստաբան Լիլիթ Մանյանի,

քննության առնելով փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2382), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Գրիգոր Գրիգորյանը **(այսուհետ՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ հանդիսանում է հայցվոր, միաժամանակ հակընդդեմ հայցով պատասխանող Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում: Նշել է, որ մինչ իր կողմից հայց ներկայացնելը, ինքը իրավաբանական մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Լիլիթ Մանյանի հետ: Պայմանագրի գինը փոխադարձ համաձայնությամբ սահմանվել է 300.000 ՀՀ դրամ: Նախապես փոխանցել է 20.000 ՀՀ դրամ: Փաստաբան Լիլիթ Մանյանը ծանոթացել է փաստաթղթերին և պատրաստակամություն է հայտնել ներկայացնել իր շահերը,

Թիվ ԿԳ-25084-2-Ա
14.01.2026թ.

կատարել հարցումներ, վարել բանակցություններ, հարկ եղած դեպքում նաև դիմել դատարան և իրականացնել ներկայացուցչություն: Փաստաբանը հայտնել է նաև իր կարծիքը, որ առկա են բոլոր հիմքերը դատարանի կողմից բարենպաստ վճիռ կայացնելու համար:

Դիմողը նշել է, որ փաստաբան Լ.Մանյանը հապաղել է աշխատանքի կատարման մեջ, և ինքը ստիպված դիմել է այլ փաստաբանի: Ներկայացրել են հայցադիմում և արդեն դատական քննության ժամանակ ի զարմանս իրեն տեղեկացել է, որ իր հակառակ կողմի փաստաբանը հանդիսանում է նույն փաստաբան Լիլիթ Մանյանը: Վերջինս կազմել է փաստաթղթեր և ներկայացրել դատարան:

Դիմողը հավելել է, որ Փաստաբանն իրավունք չուներ ներկայացնել հակառակորդ կողմի շահերը, քանի որ ծանոթ է եղել իր մոտ գտնվող փաստաթղթերին և իրավիճակին, և հետևապես իրենց կողմից բոլոր քայլերը եղել են կանխատեսելի փաստաբանի համար, ուստի նաև վստահորդների համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 11.11.2025թ. Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 26.11.2025թ. ներկայացրել է որոշակի ապացույցներ և խնդրել է ապահովել գործի ամբողջական ուսումնասիրություն:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Լիլիթ Մանյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Գրիգոր Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 22.09.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Դիմողը 28.03.2025թ. այցելել է գրասենյակ և հայտնել, որ ունի գույքային խնդիր, որը վերաբերում է իր ծնողների մահից հետո մնացած ժառանգական գույքին:

Փաստաբանը նշել է, որ իր կողմից Դիմողին տրվել է խորհրդատվություն ժառանգությունն ընդունելու եղանակների և կարգի վերաբերյալ: Այնուհետև, կողմերի փոխադարձ համաձայնությամբ 30.03.2024թ. կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, սակայն պայմանագիրը կնքելուց հետո Դիմողը չի վճարել Պայմանագրի գումարը, իսկ Փաստաբանը Դիմողի շահերին ուղղված որևէ գործողություն չի կատարել:

Փաստաբանը հերքել է փաստաթղթերին ծանոթանալու, ինչպես նաև որպես պայմանագրի գումար՝ 20.000 ՀՀ դրամ գումար ստանալու Դիմողի պնդումները:

Փաստաբանը հավելել է, որ խորհրդատվությունը վերաբերելի է եղել ժառանգության ինստիտուտին և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հնարավոր հայցապահանջի ներկայացմանը, իսկ թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում հայցապահանջը եղել է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման մասին, այլ անձանց և այլ գույքի վերաբերյալ:

Փաստաբանը պնդել է, որ ժառանգությանը վերաբերելի գործի շրջանակներում խորհրդատվության ընթացքում Դիմողը չի հայտնել որևէ տեղեկատվություն, որը կարող էր փաստաբանական գաղտնիքի առարկա հանդիսանալ և ընդհանրապես դիմողի կողմից ըստ էության տեղեկություններ չի հայտնվել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է Գրիգոր Գրիգորյանի դիմումը մերժել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 11.11.2025թ. Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 18.11.2025թ. ներկայացրած բացատրությամբ, ըստ էության, հայտնել է նախկինում արտահայտած դիրքորոշումները և տեղեկացրել, որ պայմանագրում ծառայությունների կատարման ուղղվածությունը չնշելը տեխնիկական վրիպակ է:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 01.11.2025թ. թիվ 290-Ա/ԿԳ-25084 որոշմամբ փաստաբան Լիլիթ Մանյանի նկատմամբ **Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.2.7 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

07.10.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 05.12.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 14.01.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 30.03.2024թ. իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրով* ***(այսուհետ՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում Փաստաբանը իրականացնում է հետևյալ իրավաբանական գործողությունները (ներկայացուցչությունը)՝ ներկայացուցչություն դատարանում: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի 1.2 կետով:*

3. Կողմերի միջև կնքված պայմանագիրը չի լուծվել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

4. Փաստաբանը տրամադրել է Դիմողին իրավական խորհրդատվություն ժառանգության ընդունման վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

5. Փաստաբանը խորհրդատվության համար Դիմողից ստացել է 20.000 ՀՀ դրամ գումար: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

6. Դիմող Գրիգոր Գրիգորյանը հանդիսանում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հայցվոր: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով:*

7. Փաստաբանը թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հանդիսանում է Դիմողի դատավարական հակառակորդների ներկայացուցիչը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լիլիթ Մանյանը փաստաբան է հանդիսանում 08.02.2018 թվականից, և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լիլիթ Մանյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.7 ենթակետի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ոչ էության

նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, փաստաբան Լիլիթ Մանյանին վերագրում է շահերի հակասություն ունեցող երկու վստահորդներին իրավական օգնություն ցույց տալու վարքագիծ:

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները, դրանք համադրելով մեջբերված նորմերի ու հիմնավորումների հետ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև 30.03.2024թ. կնքվել է իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում Փաստաբանը իրականացնում է հետևյալ իրավաբանական գործողությունները (ներկայացուցչությունը)՝ ներկայացուցչություն դատարանում: Հատկանշական է, որ Փաստաբանը տրամադրել է Դիմողին իրավական խորհրդատվություն, իսկ կողմերի միջև կնքված պայմանագիրը չի լուծվել:

Միաժամանակ, գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Գրիգոր Գրիգորյանը հանդիսանում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հայցվոր, իսկ Փաստաբանը նույն գործով հանդիսանում է Դիմողի դատավարական հակառակորդների ներկայացուցիչը:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն, անդրադառնալով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Կանոնագիրք 3.2.7 ենթակետի պահանջների խախտմանը, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝*

1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն):

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝

1. Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով. (...)

5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝ (...)

դ. առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև:

Կանոնագրքի 3.2.7 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պետք է դադարեցնի գործել երկուսի կամ բոլոր շահագրգիռ կողմերի օգտին, երբ վստահորդների միջև ծագում է շահերի հակասություն և երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ երբ փաստաբանի անկախությունը կարող է սահմանափակվել:*

Կանոնագրքի 1.4 կետի 8-րդ պարբերության համաձայն՝ *վստահորդ է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձ (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու,*

Նույն կետի 9-րդ պարբերության համաձայն՝ *պատվիրատու է հանդիսանում վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար:*

Նույն կետի 10-րդ պարբերության համաձայն՝ *հակառակորդ կողմ է հանդիսանում փաստաբանի վստահորդի հետ վեճ ունեցող անձը, կամ փաստաբանի վստահորդի դատավարական հակառակ կողմը.*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ այդ, Օրենքին համապատասխան, Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, անդրադառնալով փաստաբան-վստահորդ հարաբերություններին, սահմանել է նաև այդ հարաբերություններում հանդես իրավական օգնություն հայցող անձի հասկացությունը, ում օգտին փաստաբանը կատարում է որոշակի գործողություններ, ինչի հաշվառմամբ, բացահայտելով փաստաբանական գործունեության էությանը, սահմանվել են նաև այն նվազագույն գործողությունները, որոնք իրենց բովանդակությամբ ներառվում են փաստաբանական գործունեության մեջ՝ այն է, ի թիվս այլնի, խորհրդատվության տրամադրումը:

Վերոգրյալից բխում է, որ փաստաբանի համար վստահորդի իրավունքների և շահերի բարեխղճորեն պաշտպանելու պարտականությունից բացի, սահմանվում է նաև պարտավորություն յուրաքանչյուր դեպքում դիտարկելու, թե ովքեր են հանդիսանում իր վստահորդի հակադիր կողմերը, որպեսզի ողջամտորեն հնարավոր լինի գնահատել ստանձնած հանձնարարության հնարավոր ռիսկերը և իրավական հետևանքները՝ կանխելով իր կողմից Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների հնարավոր խախտումները:

Նշված իրավակարգավորումներից նաև հետևում է, որ փաստաբանի համար գործի ստանձնման արգելք է հանդիսանում այն իրավիճակը, երբ առկա է վստահորդների միջև շահերի հակասություն, ինչպես նաև երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ երբ փաստաբանի անկախությունը կարող է սահմանափակվել:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը և դիմողի միջև 30.03.2024թ. կնքվել է իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր, համաձայն որի Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը ժառանգական գույքի հետ կապված խնդրի շուրջ: Ընդ որում, Պայմանագիրը չի լուծվել:

Հարկ է նշել, որ թե՛ Դիմողը, թե՛ Փաստաբանն իրենց բացատրություններով և կարգապահական նիստի ընթացքում արտահայտված դիրքորոշումներով նշել են, որ պայմանագրի կնքմանը նախորդել է Փաստաբանի տրամադրած բանավոր խորհրդատվությունը, որը տեղի է ունեցել Դիմողի հայտնած տեղեկությունների և հիման վրա:

Նշվածից ակնհայտ է, որ Դիմողը հանդիսանում է Փաստաբանի վստահորդը:

Հաջորդիվ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Դիմող Գրիգոր Գրիգորյանը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում հանդիսանում է հայցվոր և հակընդդեմ հայցով պատասխանող, իսկ Փաստաբանը հանդիսանում է գործով պատասխանողների և հակընդդեմ հայցով հայցվորների ներկայացուցիչը: Մասնավորապես, դատական գործի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ Դիմողը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Մանուկ Հմայակի Գրիգորյանի և Լյուբով Նիկոլաևնայի Գրիգորյանի ձեռքբերման վաղեմության ուժով Կոտայքի մարզի Նոր Հաճն

համայնքի Մրգաշեն գյուղի 9-րդ փողոցի 2 հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին:

Նույն գործի շրջանակներում Մերի Մանուկի Գրիգորյանը ներկայացրել է հաընդդեմ հայց ընդդեմ Գրիգոր Երեգի Գրիգորյանի՝ ապօրինի տիրապետումից անշարժ գույքն ազատելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Վերոգրյալից փաստացի ստացվում է, որ թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում Հայցվորը և Պատասխանողները հանդիսացել են Փաստաբանի վստահորդները, ովքեր միևնույն գործով հանդիսանում են «դատավարական հակառակորդներ», հետևաբար նրանց շահերի միջև առկա է հակասություն, այն հանգամանքի հաշվառմամբ, որ թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով մեկի հաղթանակը անխուսափելիորեն գույքային առավելություն է տալու այդ կողմին՝ ի վնաս մյուսի:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև Կանոնագրքով սահմանված փաստաբանի կոնկրետ դատական գործի շրջանակներում լիազորությունների դադարեցման պարտականության հարցին: Այսպիսով, համաձայն գործող կարգավորումների փաստաբանը ունի իմպերատիվ պարտականություն դադարեցնի գործել վստահորդի կամ երկու վստահորդների օգտին, եթե նրան միջև առկա է շահերի հակասություն:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նույնիսկ եթե Փաստաբանը Մանուկ Հմայակի Գրիգորյանի և Լյուբով Նիկոլաևնայի Գրիգորյանի հանձնարարությունն ընդունելու պահին չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ այն փաստը, որ Դիմողը հանդիսանում է տվյալ դատական գործերով պատասխանող կողմը, ապա, այնուամենայնիվ, հետագայում բացահայտելով այդ փաստը չի դադարեցրել նոր վստահորդների շահերի պաշտպանությունը: Մասնավորապես, Փաստաբանը նշել է, որ մասնակցել է բազմաթիվ դատական նիստերին և հասկացել է, որ հակառակ կողմը իրեն դիմած և պայմանագիր կնքած անձն է (Փաստաբանը այս փաստը ընդունել է կարգապահական նիստի ընթացքում), սակայն չի դադարեցրել ծառայությունների մատուցումը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններ և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.7 ենթակետի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Կանոնագրքի 3.2.7 ենթակետում սահմանված «և» շաղկապի կիրառումը չի նշանակում, որ դրանում նշված բոլոր հիմքերը պետք է պարտադիր առկա լինեն միաժամանակ: Նորմի բովանդակությունից, կարգավորման նպատակից և դրա համակարգային մեկնաբանությունից բխում է, որ խոսքը

վերաբերում է շահերի բախման տարբեր դրսևորումների, որոնցից յուրաքանչյուրն ինքնին կարող է բավարար լինել տվյալ իրավական հետևանքի առաջացման համար: Հակառակ մեկնաբանությունը նորմը կդարձնի չափազանց նեղ կիրառելի և կհանգեցնի այնպիսի իրավիճակի, երբ ակնհայտ շահերի հակասության առկայության դեպքում անգամ իրավական հետևանքը չի առաջանա միայն այն պատճառով, որ միաժամանակ առկա չէ նաև մյուս հանգամանքը: Ուստի տվյալ դեպքում «և»-ը պետք է ընկալել ոչ թե որպես միաժամանակյա բոլոր պայմանների առկայություն, այլ որպես նույն կարգավորման շրջանակում ներառված, միմյանց հետ բովանդակային առնչություն ունեցող հիմքերի շարադրանք:

Հաշվի առնելով, որ սույն գործով շահերի հակասության հանգամանքը հաստատվել է, ուստի Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Կանոնագրքի 3.2.7 ենթակետով սահմանված մյուս պահանջներին:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից

մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ ***սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով*** *նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համարելի չէ փաստաբանի կարգապահական*

Վերոգրյալ նորմից հետևում է, որ Հանձնաժողովին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից դիտավորությամբ կատարված այնպիսի խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Տվյալ դեպքում, Փաստաբանը մեղավոր է ճանաչվել նաև «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի խախտման համար, ինչը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Փաստաբանը, երկու վստահորդների շահերի հակասության պայմաններում, ոչ միայն միջոցներ չի ձեռնարկել նոր վստահորդների կողմից տրվող հանձնարարության ընդունումից հրաժարվելու ուղղությամբ, այլ նաև հետագայում, նշված փաստը բացահայտելու պայմաններում, չի դադարեցրել նոր վստահորդների շահերի պաշտպանությունը:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով՝ գործել է ի վնաս իր վստահորդ՝ Դիմողի, ում շահերը պետք է պաշտպաներ մշտապես:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայության փաստն, ինչպես նաև Փաստաբանի բացատրությունները, որոնցից չի կիրառում ավելի խիստ տույժի տեսակ, որը ելնելով սույն գործով Փաստաբանին վերագրվող վարքագծի և հաստատված փաստերի համատեքստում, կարող էր կիրառվել ավելի խիստ տույժի տեսակ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը, հաշվի առնելով կարգապահական պատասխանատվության ուղղիչ և կանխարգելիչ նշանակությունը, գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառվի կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով,

Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանի (արտոնագիր՝ թիվ 2382) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.7 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25084-2-Ա
14 հունվարի 2026թ.
ք.Երևան